## ՔՆՆԱՐԿՈՒՄ ՝ «ՀԱՐՑԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԲԵՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՏԱՐԱՆՆԵՐՈՒՄ. ԿԱՏԱՐՅԱԼԸ ԵՎ ԻՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ» ԽՈՐԱԳՐՈՎ

10.11.2022 14:35

ՀՀ փաստաբանների պալատում տեղի ունեցավ քննարկում «**Հարցաքննության մարտավարությունը տարբեր իրավասությունների դատարաններում. կատարյալը և իրականությունը**» խորագրով:

Հայաստանի փաստաբանների համար կազմակերպված քննարկումը վարեցին Մոսկվայի, Բեռլինի փաստաբանների պալատների փաստաբան, Ռուսաստանի փաստաբանների գիլդիայի նախագահի տեղակալ, Աշխատանքի և սոցիալական հարաբերությունների ակադեմիայի պրոֆեսոր (Մոսկվա), ի.գ.թ. **Ռուբեն Մարգարյանը** և Անգլիայի և Ուելսի բարձրագույն դատարանների փաստաբան, Լոնդոնի արբիտրների թագավորական ինստիտուտի (CIArb) անդամ, Հաագայի առևտրային արբիտրաժի միջազգային խորհրդի (ICCA) անդամ, Լոնդոնի խորհրդի անդամ, Լոնդոնի ծովային արբիտրների ասոցիացիայի (LMAA) անդամ **Նորայր Բաբաջանյանը:**

Բանախոսները Հայաստանի փաստաբանների կողմից հնչող հարցերին տվեցին սպառիչ պատասխաններ՝ ապահովելով փորձի փոխանակում և բովանդակային զրույց:

ՀՀ փաստաբանների պալատի ներկայացուցիչները շնորհակալություն հայտնեցին բանախոսներին ՝ արդյունավետ քննարկում անցկացնելու համար:

Հանդիպման ավարտին հյուրընկալված բանախոսները շրջայց կատարեցին Փաստաբանների պալատի վարչական շենքում, Փաստաբանական ակադեմիայում և Հանրային պաշտպանի գրասենյակում:

РУС.

В палате Адвокатов РА состоялась открытая лекция-дискуссия, под названием «Тактика допроса в судах разных юрисдикций: идеал и реальность». Дискуссию, для армянских адвокатов вели Рубен Маркарьян, адвокат Адвокатских палат Москвы и Берлина, заместитель Президента Гильдии российских адвокатов, Профессор Академии труда и социальных отношений (Москва),кандидат юридических наук и Норайр Бабаджанян, адвокат Высших судов Англии и Уэльса, действительный член Королевского института арбитров в Лондоне (CIArb), член Международного совета по коммерческому арбитражу в Гааге (ICCA),

член Совета Лондонского международного третейского суда (LCIA), член Лондонской ассоциации морских арбитров (LMAA).

Спикеры дали исчерпывающие ответы на вопросы, заданные адвокатами  Армении, обеспечив обмен опытом и содержательную беседу.

Представители Палаты адвокатов РА поблагодарили спикеров за продуктивную дискуссию.

По окончанию встречи приглашенные спикеры ознакомились и  осмотрели административное здание Палаты адвокатов, посетили  Академию адвокатов и Канцелярию общественного защитника.

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })